

Յունիս 26, 1980

Ազնուափայլ  
Տիկին Մէրի Պետրոսեան  
Նիւ Եորք.

Սիրելի Տիկին Պետրոսեան,

Ենորհակալութեամբ ստացանք ձեր հանգուցեալ մեծ հօր եւ  
մեծ մօր՝ Սարգիս եւ Կիւլիք Գուշաքմեանի ի յիշատակ Ս. Վար-  
դան Մայր Տաճարի ըրած լման Պատարագի գեղեցիկ զգեստը:

Տարւոյս Սեպտեմբեր ամսուան ընթացքին Մայր Տաճարին մէջ  
Ս. Պատարագէն ետք պիտի կատարուի մասնաւոր Հոգեհանգստեան  
Պաշտօն, որուն ընթացքին պիտի յիշենք անունները ձեր հանգուց-  
եալ մեծ հօր եւ մեծ մօր Սարգիս եւ Կիւլիք Գուշաքմեանի: Հո-  
գեհանգստեան վերջնական թուականը կանխաւ պիտի տեղեկացնուի  
ձեզի:

Կ'աղօթենք որ Տէրը ձեր ննջեցեալ սիրելիներուն պարգեւէ  
յաւիտենական հանգիստ եւ խղաղութիւն իր արճայութեան մէջ:  
Ձեզի ալ շնորհէ հաստատուն առողջութիւն եւ երկար կեանք,  
որպէս զի միշտ ձեր ներկայութիւնը վայելենք Մայր Տաճարի  
շուրջ եւ դուք ալ շարունակէք ձեր նուիրեալ եւ հաւատարիմ  
ծառայութիւնը Աստուծոյ Տան:

Աղօթարար

Խաժակ Վրդ. Պարսամեան  
Լուսարարպետ